«ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԽՈՐԱՅՈՒՄ» ԽՄԲԱԿ

ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ՝ տարրական / 2-4 դասարաններ/

ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝ շաբաթական 2 դասաժամ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Խմբակի գործունեությունը կնպաստի « Շախմատ» առարկայով հետաքրքրված սովորողների ինտելեկտի զարգացմանը: Խմբակը կնպաստի « Շախմատ» առարկայի դասավանդման ընթացքում ձեռք բերված գիտելիքների և հմտությունների խորացմանը և ամրապնդմանը: Խմբակը հնարավորություն կընձեռի 2-4 –րդ դասարաններում ուսումնառության ակնկալվող ներքոնշյալ վերջնարդյունքներից բխող կարողությունների զարգացմանը և ամրապնդմանը. տարբեր մարտավարական հնարքների ստեղծում, ծուղակների դեպքում արագ կողմնորոշում, իրավիճակի ճիշտ գնահատում, խաղի պլանի կազմում, մրցակցի և սեփական դիրքերի գնահատում, նյութական առավելության հասնելը բաց և կիսաբաց գծերում, թույլ դաշտերում, արգելափակում օգտագործելու կարողություն, պաշտպանի ոչնչացման կիրառմանը, հարձակում, մարտավարական և ռազմավարական այլ հնարքների կիրառում, շահած դրության հասնելը: Խմբակը հնարավորություն կտա սովորողներին սովորեցնել « Շախմատ» առարկայի ծրագրում չընդգրկված հնարքներ:

ՆՊԱՏԱԿԸ՝

- Ներկայացնել սկզբնախաղի վարման տեսակները
- Զևավորել և զարգացնել սովորողների այլընտրանքային մտածողություն, իրավիճակը գնահատելու հմտություններ
- Նպաստել սովորողների ունակությունների զարգացմանը
- Զարգացնել հաշվարկային հմտությունները
- Արժևորել տրամաբանության խթանումը, ստեղծագործական մտքի զարգացումը:

ԽՆԴԻՐՆԵՐ՝

- Ինչպես վարվել ծանր իրավիճակներում.
- Նոր մտքեր և գաղափարներ առաջադրել քննարկման արդյունքում.
- Վերլուծել ստացած տեղեկությունը՝ համադրելով սեփական կարծիքը.
- Զարգացնել խրավիճակը գնահատելու, ճիշտ որոշումներ կայացնելու հմտություններ.

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Խմբակի անդամները կկարողանան՝

- ամրապնդել գործնական խաղերի միջոցով ստացած գիտելիքները, ձևավորել մտածված, ինքնուրույն որոշումներ ընդունելու, հույզերը կառավարելու, մրցակցին ապրումակցելու հմտություններ.
- գնահատել արդար խաղն ու ազնվությունը.
- կիրառել ստացած գիտելիքները գործնականում՝ մասնակցելով դպրոցական օլիմպիադաներին, կարգային մրցաշարերին և զբաղեցնի մրցանակային տեղեր.
- կարևորել գիտելիքի հստակ կապը կյանքի հետ.
- կայացնել ինքնուրույն որոշումներ.
- գիտակցել համագործակցված աշխատանքի կարևորությունը.
- ունենալ սեփական, մտածելակերպի և կարողությունների նկատմամբ վստահություն։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<u>ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ</u>՝ կահավորված շախմատի սենյակ՝ անհրաժեշտ նյութատեխնիկական հագեցվածությամբ, սմարթ էկրան, համացանց։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ, ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հանրակրթական ուսումնական հաստատություններում « Շախմատ » առարկայի 2-4-րդ դասարանների առարկայական չափորոշիչ, հաստատված 2023թ. մարտի 30-ին N 37-Ն որոշմամբ:
2. Թումանյան Հ. Տ. Շախմատ 2, Դասագիրք, Երևան, 2017 թ.
3. Թումանյան Հ. Տ. Շախմատ 3, Դասագիրք, Երևան, 2015 թ.
4. Թումանյան Հ. Տ. Շախմատ 4, Դասագիրք, Երևան, 2019 թ
5. Միսակյան Ս.Զ. , Շախմատ 2-4, Մեթոդական ուղեցույց, Երևան, 2013թ
6. « Բոբբի Ֆիշերը սովորեցնում է շախմատ խաղալ» Ռոբերտ Ֆիշեր, Ստյուարտ Մարգուլիս
7. « Շախմատային խաղի դասագիրք» Էմանուիլ Լասկեր
8. https://chess-boom.online/chessvideos/debyuty-lovushki/
9. https://chessmatenok.ru/shahmatnye-lovushki/

ԾՐԱԳԻՐ/ ՏԱՐԵԿԱՆ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Հ/Հ	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ՆՊԱՏԱԿ	ԺԱՄԱ-ՔԱՆԱԿ	ՆՇՈՒՄՆԵՐ
1.	Խաղի սկզբունքները	Սովորեցնել շախմատի կանոնները: Ծանոթացնել էթիկական նորմերին:	2	
2.	Երկքայլանի մատային խնդիրներ	Ամրապնդել շախ, մատ, պատ թեմաները՝ երկքայլանի խնդիրների լուծմամբ	2	
3.	Թունավոր զինվոր	Ձևավորել վտանգավոր և թույլատրելի հարվածներ ճանաչելու կարողությունը:	2	
4.	Թագուհով գրոհ	Ուսուցանել թագուհով գրոհի տեխնիկան	1	
5.	Մատային ծուղակներ	Օգտագործելով դիրքի գնահատումը՝ սովորողների միջոցով բացահայտել մարտավարական հնարքը: Ձևավորել հմտություն կիրառելու մարտավարական հնարքն ըստ անհրաժեշտության:	2	
6.	Գործնական խաղ	Անցկացնել Դաս-մրցույթ գործնական թիմային խաղով, խաղի ընթացքում ամրապնդել պլանավորելու և խաղաքարերը վերադասավորելու կարողությունները:	2	
7.	Մատային գրոհ վերջին և նախավերջին հորիզոնականներով	Օգտագործելով դիրքի գնահատումը՝ սովորողների միջոցով բացահայտել մարտավարական հնարքը: Ձևավորել հմտություն կիրառելու մարտավարական հնարքն ըստ անհրաժեշտության:	1	
8.	7-րդ հորիզոնական և 2-րդ հորիզոնական, թույլ դաշտեր	Օգտագործելով դիրքի գնահատումը՝ սովորողների միջոցով բացահայտել մարտավարական հնարքը: Ձևավորել հմտություն կիրառելու մարտավարական հնարքն ըստ անհրաժեշտության:	1	
9	Թուլություն վերջին հորիզոնականում	Օգտագործելով դիրքի գնահատումը՝ սովորողների միջոցով բացահայտել մարտավարական հնարքը: Ձևավորել հմտություն կիրառելու մարտավարական հնարքն ըստ անհրաժեշտության:	1	
10	Գործնական խաղ	Անցկացնել Դաս-մրցույթ գործնական խաղով, խաղի ընթացքում ամրապնդել	2	

		սկզբնախաղի, միջնախաղի և վերջնախաղի հիմունքները: Սաների միջոցով վերլուծել խաղերը		
11.	Երկքայլանի մատային խնդիրներ	Ուսուցանել երքայլանի խնդիրներ լուծելու տեխնիկան: Մրցակցային միջավայր ստեղծելով՝ կազմակերպել երկքայլանի խնդիրերի լուծումը:	1	
12.	Գրոհ տարակողմ և անբավարար փոխատեղումների դեպքում	Օգտագործելով դիրքի գնահատումը՝ սովորողների միջոցով բացահայտել մարտավարական հնարքը: Ձևավորել հմտություն կիրառելու մարտավարական հնարքն ըստ անհրաժեշտության:	1	
13.	Խորամանկ թակարդներ	Օգտագործելով դիրքի գնահատումը՝ սովորողների միջոցով բացահայտել մարտավարական հնարքը: Ձևավորել հմտություն կիրառելու մարտավարական հնարքն ըստ անհրաժեշտության:	2	
14.	Սխալներ և ծուղակներ	Օգտագործելով դիրքի գնահատումը՝ սովորողների միջոցով բացահայտել մարտավարական հնարքը: Ձևավորել հմտություն կիրառելու մարտավարական հնարքն ըստ անհրաժեշտության:	2	
15.	Զոհաբերությունը հասցնում է հաղթանակի	Օգտագործելով դիրքի գնահատումը՝ սովորողների միջոցով բացահայտել մարտավարական հնարքը:	2	
16	Գործնական խաղ	Անցկացնել Դաս-մրցույթ գործնական թիմային խաղով, խաղի ընթացքում ամրապնդել պլանավորելու կարողությունները:	2	
17	Պաշտպանության վերացման կոմբինացիա	Ակտիվ քննարկումներով ուսուցանել թեման, սովորողների միջոցով բացահայտել պաշտպանության վերացման կոմբինացիաները	2	
18	Մեկուսացում և փակում, դաշտի գրավում	Ձևավորել այլընտրանքային, բազմատարբերակային մտածողություն սովորողների մոտ: Օգտագործելով դիրքի գնահատումը՝ սովորողների միջոցով բացահայտել մարտավարական հնարքը: Ձևավորել հմտություն կիրառելու մարտավարական հնարքն ըստ	2	

		անհրաժեշտության:		
19	Փրկել խաղը՝ պարտադրելով ոչ-ոքի	Ձևավորել այլընտրանքային, բազմատարբերակային մտածողություն սովորողների մոտ: Օգտագործելով դիրքի գնահատումը՝ սովորողների միջոցով բացահայտել մարտավարական հնարքը: Ձևավորել հմտություն կիրառելու մարտավարական հնարքն ըստ անհրաժեշտության:	2	
20	Գործնական խաղ	Անցկացնել Դաս-մրցույթ գործնական խաղով, խաղի ընթացքում ամրապնդել սկզբնախաղի, միջնախաղի և վերջնախաղի հիմունքները: Սաների միջոցով վերլուծել խաղերը:	2	
21	Դիրքային խաղի տարրերը	Օգտագործելով դիրքի գնահատումը՝ սովորողների միջոցով բացահայտել ռազմավարական հնարքը:	1	
22	Դիրքային առավելություն	Օգտագործելով դիրքի գնահատումը՝ սովորողների միջոցով բացահայտել ռազմավարական հնարքը:	1	
23	Զինվորների դիրքը, զինվորային թուլություններ, թույլ դաշտեր	Բանավեճի միջոցով բացահայտել նոր նյութը, ուսուցանել թույլ դաշտերի առանձնահատկությունները:	2	
24	Զինվորային վերջնախաղեր	Ձևավորել այլընտրանքային լուծումներ գտնելու հմտություն ոչ-ոքիի և հաղթանակի հասնելու համար:	2	
25	Խափուսիկ քառակուսի, եռանկյան կանոն	Ձևավորել հմտություն կիրառելու մարտավարական հնարքը ըստ անհրաժեշտության:	1	
26	Հեռավոր անցունակ զինվոր	Ձևավորել հաջողության հասնելու հմտություն: Ձևավորել հնարքը կիրառելու կարողություն:Սովորեցնել նկատել հնարքն օգտագործելու հնարավորությունները :	1	
27	Պաշտպանված անցունակ զինվոր	Ձևավորել հաջողության հասնելու հմտություն: Ձևավորել հնարքը կիրառելու կարողություն: Օգտագործելով դիրքի գնահատումը՝ սովորողների միջոցով բացահայտել մարտավարական հնարքը: Ձևավորել հաջողության հասնելու հմտություն: Ձևավորել հնարքը կիրառելու կարողություն:Սովորեցնել նկատել հնարքն օգտագործելու հնարավորությունները կարողությունը:	1	
28	Զինվորային ճեղքում	Ձևավորել հաջողության հասնելու հմտություն: Ձևավորել հնարքը կիրառելու	1	

		կարողություն: Օգտագործելով դիրքի գնահատումը՝ սովորողների միջոցով բացահայտել մարտավարական հնարքը: Ձևավորել հաջողության հասնելու հմտություն: :Սովորեցնել նկատել հնարքն օգտագործելու հնարավորությունները:		
29	Շրջափակված զինվոր	Ձևավորել իրավիճակը ճանաչելու և կիրառելու կարողություն: Օգտագործելով դիրքի գնահատումը՝ ձևավորել ռազմավարություն կառուցելու կարողություն:	1	
30	Տարբեր թևերում առկա զինվորներ	Ձևավորել իրավիճակը ճանաչելու և կիրառելու կարողություն: Օգտագործելով դիրքի գնահատումը՝ ձևավորել ռազմավարություն կառուցելու կարողություն:	1	
31	Գործնական խաղ	Անցկացնել Դաս-մրցույթ գործնական խաղով, խաղի ընթացքում ամրապնդել սկզբնախաղի, միջնախաղի և վերջնախաղի հիմունքները:	2	
32	Արքայական գամբիթ	Ուսուցանել խաղը վարելու հիմունքները սկզբնախաղում:	1	
33	Թագուհու գամբիթ	Ուսուցանել խաղը վարելու հիմունքները տվյալ սկզբնախաղում:	1	
34	Սկանդինավյան պաշտպանություն	Ուսուցանել խաղը վարելու հիմունքները տվյալ սկզբնախաղում:	1	
35	Սիցիլիական պաշտպանություն	Ուսուցանել խաղը վարելու հիմունքները տվյալ սկզբնախաղում:	2	
36	Կարո- Կանի պաշտպանություն	Ուսուցանել խաղը վարելու հիմունքները տվյալ սկզբնախաղում:	1	
37	Ֆրանսիական պաշտպանություն	Ուսուցանել խաղը վարելու հիմունքները տվյալ Ոսկզբնախաղում:	1	
38	Գործնական խաղ	Խաղի ընթացքում ամրապնդել սկզբնախաղի հիմունքները:	2	
39.	Առաջադրանքներ. հասնել հաղթանակի	Ձևավորել այլընտրանքային, բազմատարբերակային մտածողություն սովորողների մոտ:	1	
40.	Վերլուծություն հայ շախմատիստների պարտիաներից	Սովորողներին ներկայացնել հայ շախմատիստների տարբեր խաղային ոճեր:	2	
41.	Բաց սկզբնախաղեր	Ուսուցանել բաց սկզբնախաղի առանձնահատկությունները,պլանները, խաղը և ռազմավարությունը	1	

		կառուցելու սկզբունքները:		
42.	Փակ սկզբնախաղեր	Ուսուցանել փակ սկզբնախաղի առանձնահատկությունները,պլանները, խաղը և ռազմավարությունը կառուցելու սկզբունքները:	1	
43.	Գործնական խաղ	Գործնական խաղի միջոցով ամրապնդել սովորողների գիտելիքները: Ձևավորել մտածված որոշումներ ընդունելու հմտություններ, ձևավորել ինքնուրույն ուշադրությունը կենտրոնացնելու, հույզերը կառավարելու, մրցակցին ապրումակցելու կարողություններ:	2	
44.	Կիսաբաց սկզբնախաղեր	Ուսուցանել խաղը վարելու հիմունքները սկզբնախաղում:	1	
45.	Կործանում սկզբնախաղում	Ուսուցանել սկզբնախաղի ծուղակները և սխալները: Ուսուցանել թակարդներ ստեղծելու հնարավորությունները և թակարդի մեջ չընկնելու տարբերակները:	1	
46.	Դեբյուտային 5 թակարդներ	Ուսուցանել խաղը վարելու հիմունքները սկզբնախաղում:	1	
47.	Գործնական խաղ	Խաղի ընթացքում ամրապնդել սկզբնախաղի, միջնախաղի և վերջնախաղի հիմունքները: Սաների միջոցով վերլուծել խաղերը: Քննարկել դրանք վերացնելու հնարավոր ուղիները:	1	
	Ընդամենը՝		68	